ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ>> ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ- Դասվար

ԹԵՄԱ- Առակի դասավանդումը տարրական դպրոցում

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ Նունուֆար Ստեփանյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ № 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՎԱՐ

ՂԵԿԱՎԱՐ՝ Թամարա Աթայան

ԳՈՐԻՍ 2023

ԳԼԽԱՑԱՆԿ

Ներածություն----------3
Հիմնական մաս . Առակի դասավանդումը տարրական դասարանում----------4
Եզրակացություն----------12
Օգտագործված գրականության ցանկ----------13

Ներածություն

Առակը առաջացել է ժողովրդական բանահյուսության մեջ, ապա անցել է գրականությանը: Առակը կենդանական հեքիաթի տարատեսակներից է, բայց սեղմ սյուժեով:

Հին ժամանակներում հայտնի էին հատկապես հույն առակագիր Եզովպոսի գործերը:

Նոր ժամանակներում առակի ժանրը բարձրության հասցրին Կռիլովը, Լաֆոնտենը, իսկ հայկական առակները XII-XIII դարերում Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին, Աթաբեկ Խնկոյանը և ուրիշներ:

Առակը երգիծական ժանր է: Մարդկային կյանքի թերություններն նրա մեջ ներկայացվում են անուղղակի ձևով: Որպես գործող անձինք հանդես են գալիս մեծամասամբ կենդանիները, բնության երևույթները կամ առարկաները:

Առակներում կենդանիների «բնավորությունները» կամ «հարաբերությունները» արտահայտվում են համապատասխան մարդկային հատկություններով:

Առակը բաղկացած է լինում երկու մասից.

Առաջինը՝ առակի սյուժեն է, երկրորդը՝ բարոյախոսությունն է:

Այս երկու մասերի առկայությամբ է պայմանավորված առակային ստեղծագործությունների քնարա-էպիկական բնույթը:

Առակի դասավանդումը տարրական դպրոցում

Առակները տարրական դասարանների դասագրքերում ամենից հաճախ հանդիպող գեղարվեստական ստեղծագործություններից են: Եվ դա, իհարկե պատահական չէ: Բանն այն է, որ երեխաներն անչափ շատ են սիրում և հեշտությամբ էլ ընկալում ու յուրացնում են առակը: Այն բարոյախոսական, երգիծական կամ ծաղրական բովանդակությամբ պատմողական բնույթի ոչ մեծ, չափածո, իսկ երբեմն էլ արձակ գեղարվեստական ստեղծագործություն է: Առակներում նկարագրված են մարդկանց արարքներն ու փոխհարաբերությունները, դիպուկ բնութագրումներով տրված են նրանց բնավորության գծերը, ծաղրի են ենթարկված մարդկային հասարակության բնորոշ թերություններն ու բացերը: Սակայն այդ ամենը ներկայացված է այլաբանորեն, փոխհարաբերական իմաստով՝ կենդանիների ու իրերի փոխհարաբերական իմաստով՝ կենդանիների ու իրերի փոխհարաբերության միջոցով: Կենդանիների փոխհարաբերության վկայակոչմամբ՝ բավականին թափանցիկ կերպով խարազանվում են հասարակության տարբեր խավերի և մարդկային բնավորության զանազան վատ գծերը: Առակներում յուրաքանչյուր կենդանի հանդես է գալիս իր այն վարքագծով, որով նա հայտնի է մարդուն նրա դարավոր կենսափորձից: Օրինակ՝ նապաստակը հանդես է գալիս որպես վախկոտության մարմնացում, աղվեսը՝ խորամանկության, գայլը՝ ագահության: Ուստի հեշտությամբ հասկացվում է, թե հեղինակն ինչ է ցանկանում ասել այդ առակով, ու՞մ և ինչ նկատառմամբ է ծաղրում:

Առակը՝ որպես գեղարվեստական ստեղծագործության տեսակ, ծագել է շատ վաղ ժամանակներում: Դեռևս անտիկ Հունաստանում հայտնի է եղել փռյուգիացի Եզոպոսը: Նրա առակները լայն ճանաչում են գտել թե՛ անցյալում, թե՛ նոր ժամանակներում:

Հայ բազմադարյան գրականության մեջ ևս վաղուց ի վեր հայտնի է առակի ժանրը:

Դեռևս 12-13-րդ դարերից հայտնի են առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին, որոնց առակները ոչ միայն հայերեն, այլև աշխարհի տարբեր լեզուներով բազմաթիվ հրատարակություններ են ունեցել: Միջնադարյան հայ առակների մասին արժեքավոր ուսումնասիրություն է կատարել նշանավոր հայագետ Ն. Մառը: Ավելի ուշ շրջանում իրենց առակներով հայտնի են Խ. Աբովյանը, Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ա. Խնկոյանը:

Առակն իր ժանրային առանձնահատկություններով որոշ չափով նման է ինչպես պատմվածքին, այնպես էլ հեքիաթին: Եթե պատմվածքի նման առակը ևս ունի սյուժե, ապա հեքիաթի պես դրա մեջ առկա են կենդանիների, առարկաների ու երևույթների անձնավորումը, վառ երևակայության ուժը և գույների խտացումը:

Եվ դա, իհարկե, պատահական չէ: Ինչպես հայտնի է, առակները ծագել են հեքիաթներից և անհամեմատ ավելի ուշ են հանդես եկել: Դասավանդման ընթացքում այս նմանություններն ու տարբերություններն անպայման պետք է հաշվի առնել, որպեսզի առակի ուսումնասիրությունը ճիշտ և արդյունավետ ձևով կատարվի:

Առակները սովորաբար բաղկացած են երեք մասից՝ պատմողական, տրամաբանական, բարոյական կամ եզրափակման: Դրանք զարգացնում են

ընթերցողի երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը, նպաստում քննադատական վերաբերմունքի ձևավորմանը: Ուստի և պատահական չէ, որ հին ժամանակներից ի վեր առարկաները տեղ են գտել դասագրքերում՝ որպես երեխաներին կարդալ, պատմել, մտածել ու դատել սովորեցնող միջոց:

Ուսուցողական տեսակետից առակների կրթական ու դաստիարակչական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում: Հենց դա է պատճառը, որ տարրական դպրոցում մեծ տեղ է հատկացված առակներին: Անընդհատ մշակվել ու մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական ձևեր, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է:

Ամենից առաջ անհրաժեշտ է առակներն անցնել որպես սովորական գեղարվեստական ստեղծագործություններ և ձգտել այն բանին, որ աշակերտները միանգամայն լուրջ ընդունեն կերպարների անձնավորումը, նրանց կատարած մարդկային գործողությունները, խոսակցություններն ու դատողությունները:

Առակների ուսուցման ժամանակ հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել գործող անձերի՝ որպես գեղարվեստական կերպարների ճիշտ ընկալման վրա: Դրանով է պայմանավորված նաև այլաբանությունների ճիշտ ընկալումը: Առանձնապես շատ մեծ ջանքեր չի պահանջում այդ աշխատանքը: Նախ՝ երեխայի երևակայությունը բավականին ուժեղ է, երկրորդ՝ առարկաների մեջ տրված է կյանքի ճշմարիտ նկարագիրը կերպարների կենդանի պատկերումը, բարու հաղթանակն ու չարի պարտությունը: Այդ ամենն այնքան պատկերավոր է, որ հաճախ երեխաները մոռանում են, որ գործող անձերը կենդանիներ են:

Երրորդ դասարանի մայրենիի «Ժողովուրդն իմաստուն է» բաժինը տեքստային բազմաբնույթ աշխատանքներ կազմակերպելու լայն հնարավորություն է ընձեռում: Օր՝. տրված առակը հարստացնել երկխոսություններով, պատկերավոր արտահայտություններով, հաղորդել որպես բեմագիր կամ պիես, առակի համար հորինել նոր ավարտ կամ սկիզբ, դեպքերի զարգացման նոր ընթացք: Ասենք Եզոպոսի «Հնարամիտը» առակը կարդալուց հետո կարելի է առաջարկել որ աշակերտներն այն հարստացնեն կամ վերահաղորդեն միայն երկխոսություններով: Այդ նպատակով կարելի է դասարանը բաժանել 3-4 հոգիանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրամադրել մեկ առակ, որտեղ երկխոսություն չկա, և առաջարկել այն հարստացնել երկխոսություններով: Կամ կարելի է ընտրել նույն առակը և հանձնարարել տարբեր առաջադրանքներ:

Այսպես՝

1-ին խումբ: Առակը հարստացնել պատկերավոր արտահայտություններով:

2-րդ խումբ: Առակի բովանդակությունը վերաշարադրել նոր ձևով:

3-րդ խումբ: Առակի համար նոր սկիզբ հորինել:

4-րդ խումբ: Դեպքերի զարգացման այլ ընթացք հորինել:

5-րդ խումբ: Առակը նկարազարդել:

6-րդ խումբ: Արձակ ձևով շարադրված առակը վերածել չափածոի:

7-րդ խումբ: Չափածո առակի բովանդակությունը հաղորդել արձակ շարադրանքով:

8-րդ խումբ: Երկխոսությունների միջոցով հաղորդել առակը:

9-րդ խումբ: Առակի հիման վրա գրել բեմագիր (սցենար):

Ուսուցիչը կարող է համապատասխան նկարներ բաժանել աշակերտներին և պատվիրել տրված նկարների հիման վրա առակ հորինել:

Կարևոր է նմանատիպ առաջադրանքների կատարումից հետո աշակերտների ստեղծագործությունների ունկնդրումն ու խրախուսումը:

Կարելի է նաև հրատարակել դասարանային հանդես կամ լրագիր, նկարազարդ առակների ինքնաշեն գրքույկներ, որտեղ տեղ կգտնեն լավագույն ստեղծագործությունները:

Առակի ուսոցման մեթոդական շղթան.

- Նախապատրաստական զրույց առակի թեմայով,
- Առակի ամբողջական ընթերցում,
- Առակի ընթերցում՝ զուգահեռ տանելով բառային աշխատանք,
- Աշխատանք բնագրի վրա (հատվածաբար, լեզվառճական և բովանդակային վերլուծություն),
- Բաժանում տրամաբանական ամբողջություն ներկայացնող հատվածների, յուրաքանչյուր հատվածի վերլուծության վերնագրում, հարցաշարի կազմում,
- Կերպարների բնութագրում, նրանց արարքների շուրջ դատողությունների, մտահանգումների կատարում,
- Աշխատանք արտահայտիչ ընթերցանության ուղղությամբ,
- Այլաբանական կամ փոխաբերական իմաստի բացահայտում,
- Անգիր ուսուցման նախապատրաստում,
- Ամփոփում:

Առակ (առ ակն՝ աշքի առաջ) բարոյախոսականբնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ ծաղրվում և քննադատվում են մարդկանց արածները:

Իսկ ո՞րն է առակի բարոյախոսությունը: Դա դրսևորվում է հեղինակի կողմից առակի վերջում՝ արտահայտելով իր հատուկ վերաբերմունքը:

Ընդհանրապես առակները չափածո ստեղծագործություններ են և բաղկացած են 2 մասից՝ այուժեից և բարոյախոսությունից:

Սյուժեն դեպքերի սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ եզրակացությունը:

Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն:

Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց:

Հնում «առակ» բառը նշանակում էր նաև խրատ, իմաստություն:

Առակների հայտնի հեղինակներ են հույն առակագիր Եզոպոսը: Առակներով հարուստ է նաև հնդկական գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ Խիկար Իմաստունն ու Մոլլա Նասրեդին: Իսկ հայ գրականության մեջ մեծ ժողովրդականություն են վայելում Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները: Հայ գրականության մեջ առակներ են գրել Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Խնկո Ապերը և ուրիշներ:

Ուզում եմ մեջ բերել Մխիթար Գոշի դաստիարակչական առակներից. «Անհնազանդ ձին», «Ջայլամն ու ծիտը», «Գոմեշն ու իր խնամողը» և այլն:

Գոմեշն ու իր խնամողը

Գոմեշը կամեցավ հարվածել իր խնամողին, բայց չկարողացավ, ուստի և տրտնջաց աստծո դեմ, թե.

-Իմ եղջյուրները ուղիղ չես ստեղծել, այլ կորաձև:

Խնամողն ասաց.

-Աստված գիտեր քո չար կամքը և դրա համար որոշեց, որ քեզ այդպիսի եղջյուրներ բուսնեն:

Առակը հանդիմանում է չար ցանկությունները, վատ մտադրությունների կանխումը:

Առակի դասավանդում տարրական դասարաններում մեծ հաջողությամբ է իրականացվում ըստ Վ. Այգեկցու և Մ. Գոշի առակներով ստեղծված «Աղվեսագրքով»: Այն իր մեջ ներառում է 120 առակ: Դրանք դաստիարակչական բնույթի են և արդիական հնչեղություն ունեն:

Առակների խրատական, դաստիարակչական նշանակությունը անձի զարգացման գործում, արտահայտված է «Աղվեսագրքում»:



ԱՌԱԿԻ ՔԱՐՏԵԶ

ՎԵՐՆԱԳԻՐ

ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՆԵՐ

_____

_____

ՓԱՍՏԵՐ

ԱՅԼ ՀԵՐՈՍՆԵՐ

_____

_____

ՄԻՋԱՎԱՅՐ

Որտե՞ղ _____

Ե՞րբ _____

Ինչի՞ համար _____

Ի՞նչ եղավ _____

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՄԿԻԶԲ

ԸՆԹԱՑՔ

ԱՎԱՐՏ

ԽՐԱՏ

Ի՞նչ է սովորեցնում առակը:

_____

_____

Եզրակացություն

Այսպիսով ամփոփելով կարող եմ ասել, որ առակների ուսուցումը շատ կարևոր է դպրոցականի համար, քանի որ առակներից կարելի է պատկերացում ստանալ միմյանց հարևանությամբ (հաճախ նույն քաղաքում) ապրող ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների մասին:

Առակների ուսուցումը կարևոր նշանակություն ունի անձի ձևավորման, զարգացման, կայացման և սոցիալականացման հետագա գործընթացում: Աստվածաշնչյան առակները իրենց դաստիարակչական ազդեցությունն են թողնում ընթերցողի, ունկնդրի վրա: Դրանք նպաստում են սովորողի ուսումնական գործընթացի զարգացմանը և գիտելիքների ձևավորմանը:

Աստվածաշնչյան առակների ուսուցումը նպաստում է սովորողների արժեհամակարգի ձևավորմանը՝ դառնալով աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկը:

Օգտագործած գրականության

ՑԱՆԿ

1. «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա» Ա. Դոլուխանյան, Երևան 2006
2. Էդ. Ջրբաշյան-«Գրականության տեսություն», «Առակ»,
3. Վ. Այգեկցի և Մ. Գոշ «Աղվեսագիրք», 2-րդ հրատարակություն, Երևան 1955թ.
4. Գ. Գրիգորյան, «Հայ ժողովրդական բանահյուսություն», Երևան 1967թ.
5. Առակ-Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան
6. Առակներ.